ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 մարտի 2022թ. **N 16-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել.

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի տեխնիկական նկարագիրը, վարման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. մարտի 24-ի N 16-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՎ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ www.elections.am, տեխնիկական նկարագիրը և դրա վարման կարգը:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը (այսուհետ՝ Հանձնաժողովի համացանցային կայք) պարունակում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք), «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվություն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գործունեության (նիստերի ժամանակացույց, օրակարգ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերի ուղիղ հեռարձակում, տեսաձայնագրություններ և որոշումներ) մասին:

2. Հանձնաժողովի համացանցային կայք կարելի է մուտք գործել Ինտերնետ էքսպլորեր (Internet Explorer), Գուգլ Քրոմ (Google Chrome), Մոզելա Ֆաերֆաքս (Mozilla Firefox), Սաֆարի (Safari), Օպերա (Opera), Քանգեր (Konqueror), Լինուքս (Lynx), Օպերա Մինի (Opera Mini) ցանցային դիտարկիչների (browser) միջոցով:

3. Հանձնաժողովի համացանցային կայքն ունի «Գլխավոր» էջ, որտեղ մուտք գործելուց երևում են Հանձնաժողովի համացանցային կայքի բաժինները, ինչպես նաև Հանձնաժողովի համացանցային կայքում գործող համակարգերն ու առցանց հարթակները:

1) Հանձնաժողովի համացանցային կայքի «Գլխավոր» էջի բաժիններն են.

ա) **«ԿԸՀ»**, որը պարունակում է հետևյալ ենթաբաժինները.

- ԿԸՀ Անդամներ
- Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
- Աշխատակազմ
- Կառուցվածք
- Որոշումներ
- Նիստեր
- Հայտարարություններ

- Վարչական վարույթներ:

բ) **«ԸԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ»**, որը պարունակում է տեղեկատվություն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերի, կազմերի, որոշումների, նիստերի, վարչական վարույթների և հայտարարությունների մասին:

գ) **«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**, որը պարունակում է հետևյալ ենթաբաժինները.

- Ազգային Ժողովի
- ՏԻՄ համամասնական
- ավագանու անդամի
- համայնքի ղեկավարի
- ԱԺ մեծամասնական
- ԱԺ Համամասնական
- Հանրապետության Նախագահի
- Ընտրություններ 1999-2005
- Տեղեկատվություն:

դ) **«ՀԱՆՐԱՔՎԵ»,** որը պարունակում է հետևյալ ենթաբաժինները.

- Տեղական հանրաքվե
- Հանրաքվե
- Հանրաքվեի նախաձեռնություններ:

ե) **«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**, որը պարունակում է հետևյալ ենթաբաժինները.

- Նորություններ
- Հանդիպումներ, այցեր
- Վերլուծություններ, հաշվետվություններ
- Հարցազրույցներ
- Մասնագիտական դասընթացներ
- ԿԸՀ դիտողություններն ու պարզաբանումները
- Քաղաքացիական ծառայություն
- Ազդարարման համակարգի պատասխանատու
- ՄԺԾԾ բյուջետային հայտեր:

զ) **«ՆՅՈՒԹԵՐ»**, որը պարունակում է հետևյալ ենթաբաժինները.

- Օրենսդրություն
- Էլեկտրոնային ձևաթղթեր
- Ձեռնարկներ, ուղեցույցեր
- Էլեկտրոնային գրադարան:

Յուրաքանչյուր Բաժնի համապատասխան ենթաբաժին պարունակում է ամբողջական տեղեկատվություն համապատասխան ենթաբաժնի վերաբերյալ:

4. Հանձնաժողովի համացանցային կայքի «Գլխավոր» էջում առկա են տեղեկություններ «Հետադարձ կապի» վերաբերյալ, մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրի հասցե, հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե:

5. Հանձնաժողովի համացանցային կայքն ունի համապատասխան ծրագրային հնարավորություն «Գլխավոր» էջում ունենալու պատուհաններ, որոնք բացվում են՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործառույթների առաջնահերթությունից, այցելուների հաճախելիությունից, ինչպես նաև հարցումների վիճակագրությունից:

6. Հանձնաժողովի համացանցային կայքում մշտապես գործում է **«Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստր»** համակարգը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի՝ մուտքագրելով լրացման ենթակա տվյալները, համապատասխան դաշտերում գտնել և տեսնել ընտրողների ռեգիստրում ընդգրկված անձի տվյալները, իսկ ընտրությունների ժամանակահատվածում նաև տեսնել տեղամասային կենտրոնի համարը, որտեղ տվյալ անձը պետք է մասնակցի քվեարկությանը:

7. Հանձնաժողովի համացանցային կայքում գործում են հետևյալ համակարգերը՝

1) **«Էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգ»**, որով Ազգային ժողովի ընտրությունների և հանրաքվեի ժամանակ ապահովվում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների էլեկտրոնային եղանակով քվեարկության իրականացումը.

2) **«Քվեարկության արդյունքների իրական ժամանակում, առցանց հրապարակման համակարգ»**, որով համապետական ընտրությունների և հանրաքվեի ժամանակ ապահովվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված քվեարկության մասնակցության և քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումն առցանց՝ իրական ժամանակում Հանձնաժողովի համացանցային կայքում և տեղեկատվական կենտրոնում.

3) **«Էլեկտրոնային եղանակով ստորագրությունների՝ առցանց ստորագրահավաքի համակարգ»**, որը հնարավորություն է տալիս հանրաքվեի նախաձեռնության ընթացքում ստորագրահավաքն իրականացնել նաև առցանց, էլեկտրոնային եղանակով՝ նույնականացման քարտի միջոցով համակարգում գրանցվելու և ստորագրահավաքին մասնակցելու եղանակով.

4) **«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների կազմակերպման, անցկացման և ամփոփման համակարգ»**, որով կուսակցություններն առցանց ներկայացնում են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացին մասնակցելու հայտերը: Նշված համակարգով իրականացվում է տեղեկատվության վերլուծություն, կազմվում է դասընթացների անցկացման ժամանակացույց, ապահովվում է դասընթացի անկացման վայրի և ժամանակի մասին իրազեկումը դիմումատուներին: Համակարգի միջոցով ամփոփվում են դասընթացների արդյունքները, տրամադրվում համապատասխան վկայականները: Համակարգը

հնարավորություն է տալիս դիմումատուներին ինքնուրույն հետևել իրենց դիմումին և ծանոթանալ արդյունքներին: Համակարգը հնարավորություն է տալիս միանշանակ նույնականացնել վկայական ունեցող քաղաքացուն.

5) **«Դասընթացներին մասնակցելու դիմումներին առցանց հետևելու գործիք»**, որը հնարավորություն է տալիս որոնման հնարավորությամբ՝ նշելով ազգանունը, անունը կամ անձնագրի տվյալը, տեղեկանալ դասընթացներին ընդգրկված լինելու մասին, դասընթացի անցկացման տեղի և վայրի մասին, ինչպես նաև ստուգարքի արդյունքներին.

6) **«Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգ»**, որի միջոցով տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտներն առցանց ներկայացնում են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներին.

7) **«Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ»**, որով կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը օգտվողի հաշիվ ստանալուց հետո մուտքագրում է իր ընտրական ցուցակում ընդգրկված անձանց տվյալները և ձևավորում համամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուների ընտրական ցուցակը: Համակարգը անձանց տվյալները ստանում է բնակչության պետական ռեգիստրից, ստուգում է ցուցակի համապատասխանությունն Ընտրական օրենսգրքի պահանջներին.

8) **«Առցանց ուսուցման հարթակ»**, որով ապահովվում է առցանց ուսուցման իրականացումը: Հարթակում առկա են ուսուցման առանձին մոդուլներ, որոնք հնարավորություն կտան գտնել և ինքնուսուցանվել ընտրական հանձնաժողովի անդամներին, անձի նույնականացման սարքավորումների մասնագետներին, դիտորդներին, վստահված անձանց և այլ շահառուներին: Հարթակը հնարավորություն է տալիս ստուգել գիտելիքները թեսթային առաջադրանքներ կատարելու եղանակով.

9) «**Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և դիտորդների տվյալների առցանց ընդունման համակարգ»**, որով իրականացվում է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման դիմումների ստացումը, հավատարմագրված դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների կողմից իրենց դիտորդների (ներկայացուցիչների) տվյալների առցանց ներկայացումը, դիտորդների (ներկայացուցիչների) ցանկի ձևավորումը, դիտորդներին տրվող վկայականներն ինքնաշխատ կերպով գեներացումը, դրանց ներբեռնումը և տպագրումը.

10) **«Ներկայացնել հարցում, դիմում կամ բողոք»** հարթակն ապահովում է Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հարցումների, դիմումների և բողոքների առցանց ներկայացման հնարավորությունը.

11) **«Հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի տեղամասերի հրապարակման գործիք»**, որով ցուցադրվում է տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասերը՝ որոնման հնարավորությամբ: Նշվածը հնարավորություն է ընձեռում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց տեղեկանալ այն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրերի մասին, որոնք հարմարեցված են նման խնդիրներ ունեցող անձանց համար, որպեսզի ցանկության դեպքում փոխեն իրենց տեղամասային կենտրոնը՝ սահմանված կարգով.

12) **«Կենտրոնական ընտրական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթների հրապարակման գործիք»**, որով իրականացվում է ստացված դիմումների և բողոքների վերբեռնումը կայք, իրականացվում է վարույթի քննարկման օրվա, ժամի և վայրի մասին ծանուցումը, ինչպես նաև վարչական վարույթի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հրապարակումը.

13) **«Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների վարման համակարգ»,** որի նպատակն է մատչելի և հարմար ձևաչափով Հանձնաժողովի համացանցային կայքում ներկայացնել որպես թեկնածու գրանցված կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշվածով իրականացվում են ընտրական ցուցակներում տեղի ունեցող փոփոխությունները՝ թեկնածուների ինքնաբացարկները, գրանցման մերժումը, գրանցման ուժը կորցրած ճանաչելը, ընտրվելը, պատգամավորի կամ ավագանու անդամի լիազորությունների դադարումը և մանդատը հերթական հաջորդ համարին տրամադրելը, և այդ տեղեկատվությունն իրական ժամանակում հրապարակելը.

8. Հանձնաժողովի համացանցային կայքի համապատասխան բաժիններում և ենթաբաժիններում հրապարակվում են.

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների և աշխատակազմի վերաբերյալ տեղեկատվություն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները (տարբեր չափանիշներով որոնման հնարավորությամբ), նորություններ, նիստերի օրակարգերը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտարարությունները և վարչական վարույթներին վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկություններ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղի ունեցող հանդիպումների, այցերի վերաբերյալ.

2) Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, գտնվելու վայրերի, նկարագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, նիստերի օրակարգերը, հայտարարությունները և վարչական վարույթներին վերաբերող տեղեկատվությունը:

9. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող յուրաքանչյուր ընտրության համար կայքում ձևավորվում է համապատասխան էջ, որտեղ հրապարակվում է նշված ընտրությանը վերաբերող ամբողջ տեղեկատվությունը:

10. Կայքի միջոցով իրականացվում է համապետական ընտրությունների տեղամասային կենտրոններից առցանց հեռարձակումը, ինչպես նաև հրապարակվում է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տեղեկությունների և ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը:

11. Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր էլեկտրոնային ձևանմուշները հաստատվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առանձին որոշումներով: Հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները: Յուրաքանչյուր ընտրության ժամանակ էլեկտորնային ձևանմուշները տեղադրվում են Հանձնաժողովի համացանցային կայքում ձևավորված՝ տվյալ ընտրության համար գործող հարթակում:

12. Հանձնաժողովի համացանցայի կայքը վարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը:

13. Հանձնաժողովի համացանցայի կայքի վարման և գործարկման աշխատանքներին մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

1) Հանձնաժողովի համացանցայի կայքի ադմինիստրատորը.

2) համապատասխան համակարգի կամ հարթակի ընթացքի համար պատասխանատու անձինք:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. մարտի 24-ի N 16-Ա որոշման

ՑԱՆԿ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված հետևյալ տեղեկությունները.

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ենթաօրենսդրական իրավական ակտերը.

2) Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների վարչական ակտերը.

3) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ենթաօրենսդրական իրավական ակտերով սահմանված ընտրական փաստաթղթերի ձևանմուշները և էլեկտրոնային ձևաթղթերը.

4) Ընտրական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ տեղեկությունները.

5) Ընտրական հանձնաժողովների գործունեության մասին՝ ներառյալ նիստերի ժամանակացույց, օրակարգ, նիստերի ուղիղ հեռարձակում, տեսաձայնագրություններ, և որոշումների վերաբերյալ տեղեկատվություն.

6) Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը, իսկ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվելու դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության՝ իրենց կողմից առաջարկվող կառուցվածքը և կազմը.

7) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների և թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը.

8) Ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը.

9) Մատչելի ընտրական տեղամասերի վերաբերյալ տեղեկատվությունը.

10) Ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար ուսումնական նյութեր.

11) Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների անցկացման գրաֆիկը (օր, ժամ, վայր).

12) Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ըստ ընտրական տեղամասերի քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.

13) Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումը՝ ներբեռնելու հնարավորությամբ.

14) Ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների սկանավորված քաղվածքները՝ ներբեռնելու հնարավորությամբ.

15) Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում.

16) Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքները՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ ըստ համայնքների.

17) Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները՝ ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ.

18) Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվում են անվճար.

19) Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկությունները.

20) Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ ամփոփ տեղեկանքները.

21) Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի վերաբերյալ եզրակացությունը.

22) Դիտորդական առաքելությունների՝ ընտրությունների վերաբերյալ ներկայացված զեկույցները՝ ներկայացվելու դեպքում.

23) Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուներին ընտրելու համար դիմումների ներկայացման կարգի և ժամկետների մասին հայտարարությունը.

24) Ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման վայրի, օրվա և ժամի մասին ծանուցումը.

25) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին հաղորդումը.

26) Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրության քվեարկության նախնական արդյունքների արձանագրությունը.

27) Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումներից դուրս բերված հետևյալ տվյալները.

ա) տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

բ) անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

գ) մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

դ) տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

ե) տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

28) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները:

2. Հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են նաև.

1) Ընտրությունների ժամանակացույցը.

2) Ընտրական գրավի մուծման հաշվեհամարը.

3) Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ գրավի չափի, ավագանիների անդամների թվի վերաբերյալ տեղեկատվությունը.

4) Տեղամասային կենտրոնները և դրանց գտնվելու վայրերը.

5) Քարոզչական պաստառներ փակցնելու համար 10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքներում առանձնացված անվճար տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը.

6) Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և դրանց հավատարմագրված դիտորդների ցանկերը.

7) Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնող հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցների և դրանց ներկայացուցիչների ցանկերը.

8) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության քվեարկության նախնական արդյունքների արձանագրությունները:

3. Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման, ընտրական հանձնաժողովներին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով Հանձնաժողովի համացանցային կայքում կարող են հրապարակվել նաև այլ տեղեկություններ: